ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Ա. Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Արմենականների կուսակցության առաջացման ու կազմավորման հարցի շուրջ թե մայր հայրենիքում, և թե սփյուռքում ստեղծվել է ոչ այնքան ծավալուն գրականություն։ Պատմաբաններից շատ շատերը, որպես կանոն, ոչ խորքային, ոչ էական հետազոտություններ են կատարել և բավարարվել են լոկ մակերեսային կարգի դատողություններով, երբեմն անելով հակագիտական, ոչ ճշգրիտ բնութագրումներ։ Մի կողմ թողնելով ազգի ու հայրենիքի ազատության գաղափարը, որոշ հետազոտողներ արմենական կուսակցությունը փորձել են պատկերացնել որպես ունևոր խավերի շահերի արտահայտիչ, որպես մանրբուրժուական կուսակցություն։ Արմենական կուսակցության առաջացման ու գործունեության շուրջ ոչ ճշգրիտ փաստեր ու որակումներ կան «Հայ ժողովրդի պատմություն» բուհական դասագրքում, ուր այն միտքն է զարգացվում, թե իբր «Արմենականները ունեին իրենց ծրագիրը, որը կոչվում էր «Վարդապետարան Հայաստանի ազատագրության»։ Դա... ազգային-դեմոկրատական բովանդակություն ունեցող մի ծրագիր էր... Բայց նրանց ծրագիրը տակավին շատ հեղհեղուկ էր»[1]։ Եվ ոչ մի խոսք կուսակցության ծավալած քարոզչական և զենք ու զինամթերքի պաշարներ ստեղծելու ուղղությամբ ծավալած ակտիվ գործունեության, 1896 թ. Վանի ինքնապաշտպանական մարտերում արմենականների մեծ դերի մասին։

Արմենական կուսակցության մասին անորոշ դատողությունների տիպիկ օրինակ կարող է հանդիսանալ հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության VI հատորը, ուր ազատագրական շարժման ընդհանուր ֆոնի վրա, Մ. Փորթուգալյանի և Մ. Խրիմյանի գործունեության լուսաբանման հետ ընդհանուր խոսքեր են ասվում արմենական կուսակցության առաջացման մասին։ Այդ կուսակցության ստեղծումը կապվում է 1889 թ. հիմնված «Հայոց հայրենասիրական Միության» հետ, արմենական կուսակցությունը ներկայացնելով որպես դրա գործնական կենտրոն, այն էլ որպես Վանի մասնաճյուղ[2]։ Որոշ պատմաբաններ էլ չխորանալով արմենականների ծրագրի նրբությունների մեջ, գտել են, որ «Արմենական կուսակցությունը սկզբից ևեթ որդեգրում է ազգային մեկուսացման գիծ՝ ծրագրում հայտարարելով, որ նա գործելու է բացառապես հայ ազգի ուժերով»[3]։ Արմենական կուսակցության կազմավորման ու գործունեության մասին անճիշտ դատողություններ կան «Հայկական Սովետական Հանրագիտարանում», ուր Մ. Փորթուգալյանը բնութագրվում է որպես «Արմենական կազմակերպության հիմնադիր և ղեկավար»[4]։ Խ. Բարսեղյանը արմենականների առաջացումը, կարծում ենք, սխալմամբ կապել է արտասահմանի հետ, գրելով, որ «ծնունդ առնելով արտասահմանում, արմենականությունը իր թելերը ձգեց Վասպուրականում»[5]։

---

1 Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1979, էջ 253։

2 Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 187։

3 Վ. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, էջ 162։

4 Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 12, Երևան, 1986, էջ 364։

5 Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, Երևան, 1967, էջ 164։

Որոշ հետազոտողներ էլ արմենական կուսակցության առաջացումը կապել են «Հայոց հայրենասիրական Միության» գործունեության հետ։ Այսպես է վարվել, օրինակ, մեծանուն հայագետ Լեոն[6]։ Այդ կարգի ոչ ճիշտ մեկնաբանություն կա նաև անվանի պատմաբան Ջ. Կիրակոսյանի մի գրքում, ուր ասված է, թե «Փորթուգալյանի գաղափարների ու մտահղացումների ազդեցության տակ Վանում կազմակերպվեց «Հայոց հայրենասիրական միությունը» մի գաղտնի կազմակերպություն, որ սկիզբ դրեց «Արմենական կուսակցության գործունեությանը»[7]։ Այս պնդումը ճիշտ չէ, քանի որ «Հայոց հայրենասիրական միությունը» կազմավորվել է արմենական կուսակցության ստեղծումից ուշ՝ 1889 թ.։ Մի շարք հետազոտողներ ու հրապարակագիրներ ևս թույլ են տվել նման անճիշտ պնդումներ, արմենական» կուսակցության առաջացումը կապելով Մ. Փորթուգալյանի հիմնադրած «Հայոց հայրենասիրական Միության» գործունեության հետ։ Արմենականների հանդես գալու և գործունեության շուրջ նույն կարգի պնդումներ կան նաև Հ. Վարդանյանի աշխատության մեջ[8]։ Ընդ որում, վերջինս գրում է, որ «Արմենականները առաջացան 1885 թ.՝ Մ. Փորթուգալյանի ղեկավարությամբ, երբ Մարսելում հիմնվեց «Արմենիա» անունով թերթ[9]։ Արմենական կուսակցության պատմության լավագույն հետազոտող Վաչե Ղազարյանը իր գրքում մանրակրկիտ կերպով քննադատել է այդ հեղինակներին[10]։

Վերջին ժամանակներս լույս տեսավ պատմաբան Ա. Համբարյանի աշխատությունը, որը հայրենի պատմագիտության մեջ, մեր կարծիքով, արմենականների մասին գրված առավել հաջողված ուսումնասիրությունն է[11]։

Արմենականները ժամանակին չեն ստեղծել հարուստ գրականություն և արխիվ։ Պատճառներից ամենաէականն այն է եղել, որ նրանք իրենց կուսակցական ու հեղափոխական գործունեության մեջ առաջնորդվել են խիստ գաղտնի կարգապահության և հետևողական գաղտնիության սկզբունքներով։ Բացառված չէ, որ կուսակցական փաստաթղթերի որոշ մասը ոչնչացվել է Վանի 1896 թ. ինքնապաշտպանական մարտերի ժամանակ։ Արմենական կուսակցության պատմության լուսաբանման ամենահավաստի ու լավագույն աղբյուրներն են նշանավոր արմենական գործիչներ Ա. Եկարյանի, Ա. Դարբինյանի և Մ. Նաթանյանի հուշագրությունները, որոնք հրատարակվել են առանձին գրքերով[12]։ Սփյուռքահայ պարբերականներում արմենական կուսակցության գործունեության շուրջ բազմաթիվ հրապարակումներով հանդես են եկել արմենական գործիչներ Ա. Տեր-Մկրտչյանը և Ս. Չըթչյանը, որոնց հաղորդած տեղեկություններն ունեն անփոխարինելի նշանակություն[13]։ Մամուլում իր հուշերով հանդես եկավ արմենական գործիչ Շ. Հովիվյանը[14]։ Արմենական կուսակցության առաջացման շուրջ բազմաթիվ

---

6 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 144։

7 Ջ. Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Երևան, 1980, էջ 245։

8 Հ. Վարդանյան, Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Երևան, 1967, էջ 287—288։

9 Նույն տեղում, էջ 287։

10 Վաչէ Ղազարեան, Արմենական կուսակցութիւնը, Բեյրութ, 1981, էջ 9—10։

11 Ա. Համբարյան, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990, էջ 157—177։

12 Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947, Արտակ Դարբինեան, Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, Մի՛ք. Նաթանեան, Արմենական կուսակցութիւնը, Գահիրէ, 1990։

13 Պայքար, 6, 14, 15, 25. V. 1951 թ., Արծուի Վասպուրական, 1956 թ., թիւ 2։

14 Նոր օր, Ֆրեզնո, 1964, մարտ, հունիս։

բնութագրումներ ու մեկնաբանություններ կան հնչակյան, դաշնակցական գործիչների հուշագրություններում ու աշխատություններում, թեև շատ դեպքեր երբեմն լուսաբանված են միակողմանի, սուբյեկտիվ դիրքերից[15]։

Այժմ տեսնենք, թե ինչպե՞ս և ի՞նչ հանգամանքներում առաջացավ արմենական կուսակցությունը։ Հայ իրականության անդրանիկ կուսակցությունն առաջացավ Վան-Վասպուրականում, 1885 թ.։ XIX դ. երկրորդ կեսում Վանում իրենց ազգանպաստ-հայրենաշունչ հույժ կարևոր առաքելական գործունեությունն էին ծավալել հայ հասարակական-քաղաքական մտքի ու ազատագրական շարժման նշանավոր գործիչներ Մ. Խրիմյանը, Գ. Սրբվանձտյանը, Մ. Փորթուգալյանը և Կ. Կամսարականը։ Արմենականների գաղափարական ոգեշնչողը հանդիսացավ հայոց պատմության էջերում իր լուսամիտ, առաջադեմ գաղափարներով ու գրական վաստակով հավերժացած Մ. Փորթուգալյանը։ Վասպուրականում նրա յոթնամյա գործունեությունը եղավ կյանքի ամենաբեղուն շրջանը։ Եվ ճշմարիտ է, որ «ան էր, որ յեղափոխական կրակը Հայաստան բերաւ։ Ան ցանեց նոր կեանքի և ազատ գաղափարների սերմերը ու իր աշակերտները թրծուած իր գաղափարական կրակով, իրենց վարդապետի հեռանալէն յետոյ՝ նոյնքան անձնուիրութեամբ Վասպուրականի, Ատրպատականի և Բաղէշի կրթական գործի վարիչները՝ ինչպէս նաև յեղափոխութեան առաքեալները եղան երկար տարիներ»[16]։

Թուրքական իշխանությունների տեսադաշտից չի վրիպում Մ. Փորթուգալյանի կրակոտ գործունեությունը և շուտով փակում են նրա վարժապետանոցը, ու որպես անբարեհույս անձնավորության վտարում Վանից։ Այնուհետև մեծ հեղափոխականը հաստատվում է ֆրանսիական Մարսել քաղաքում, ուր 1885 թ. օգոստոսին հրապարակում է իր իսկ հիմնադրած «Արմենիա» թերթի առաջին համարը։ «Արմենիան» իր սուր, համարձակ հրապարակախոսական հարցադրումների և լայնախոհ հայրենասիրական ոգու շնորհիվ մեծ ժողովրդականություն ձեռք բերեց արևելահայ ու արևմտահայ իրականության մեջ, էականորեն ներգործելով ազգային-ազատագրական մտքի ու շարժման վրա։

Արմենական կուսակցությունը ստեղծեցին Մ. Փորթուգալյանի աշակերտները, որոնք մեծապես խանդավառված էին իրենց ուսուցչի ազատասիրական գաղափարներով։ Նրանց շարքերում էին Մ. Թերլեմեզյանը (Ավետիսյան), Գ. Թերլեմեզյանը, Ռ. Շատվորյանը, Գ. Օտյանը, Գ. Աճեմյանը, Մ. Պարութճյանը, Ղ. Խանչյանը, Գ. Պեռգիկյանը (Շիկահեր), Գ. Ասլանյանը և Ե. Գոնգաքճյանը, որոնք և փաստացիորեն հիմք դրեցին արմենական կուսակցության կազմավորմանը։ Սկզբնական շրջանում նրանց ժողովների համար պետք էր խիստ գաղտնի մի թաքստոց։ Երկար խորհրդակցությունից հետո երիտասարդները որոշում են «հաւաքոյթները կայացնել հընձանի մը մէջ, քանի որ տարուան մեծ մասը հընձանները պարապ կը մնան, և հետևաբար որեւէ կասկածի տեղի չեն տար։ Որոշուեցաւ այս նպատակին համար օգտագործել Մկրտիչ և Գրիգորիս Թերլէմէզեաններուն հընձանը, որուն միակ կարասին գետինը փռուած խրսիրն էր, որուն անունովն ալ այդ հաւաքավայրը կոչուեցաւ Խսրի Տուն»[17]։ Արմենականները սկզբնական շրջանում քչաթիվ էին, բայց 1890-ական թվականներին զգալի ուժ ունեցող մի ազդեցիկ կազմակերպություն էին ներկայացնում։

---

15 Արսէն Կիտուր, Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, հրատ. Ա, Պէյրութ, 1962, էջ 320—321, Վահան Փափազեան, Իմ յուշերը, հ. Ա, Պոսթոն, 1950, էջ 130, Համբարձում Երամեան, Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1950, էջ 210։

16 Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914, էջ 59։

17 Աւետիս Յափուճեան, Համառոտ պատմութիւն Ռամկավար Ազատական կուսակցութեան կազմութեան, Կահիրէ, 1977, էջ 19։

Արմենականները հետևում էին Մ. Փորթուգալյանի հիմնած «Արմենիա» թերթի ուղղվածությանը, պրոպագանդելով նրա քարոզած գաղափարները, բայց ճիշտ չէ պատմագիտության էջերում երբեմն հանդիպող այն տեսակետը, ըստ որի Մ. Փորթուգալյանը համարվում է Արմենական կուսակցության փաստացի հիմնադիրը։ Արմենականները նրան համարում էին իրենց գաղափարական ոգեշնչողը, բայց «Մկրտիչ Փորթուգալյանը անմիջականորեն հիմնադիրը չեղավ Արմենական կուսակցութեան, այլ անոր յեղափոխական-հայրենասիրական շունչով տոգորուած երիտասարդութիւնն էր, որ հիմնեց Արմենական կուսակցութիւնը՝ անոր գաղափարներուն հիման վրայ, մարմին տալով անոր գաղափարներուն։ ...Կուսակցութիւնը իր տպագիր խօսափողը կը նկատէր «Արմէնիա» թերթը, քանի որ լիովին կը բաժնէր անոր շատագոված սկզբունքները, սակայն «Արմէնիան» երբեք կուսակցութեան պաշտօնաթերթ չեղաւ»[18]։ Արմենական կուսակցության կազմավորման և սկզբնական շրջանի կուսակցական-հեղափոխական գործունեության մեջ մեծագույն դեր է խաղացել հայ ազգային-ազատագրական շարժման պանծալի գործիչ Մ. Ավետիսյանը, որը ղեկավարեց 1896 թ. Վանի հունիսյան ինքնապաշտպանությունը։ Նա սերում էր Վանի բազմանդամ և հայտնի մի գերդաստանից, որը «ազգին տուած էր յայտնի առեւտրականներ, մտաւորականներ եւ անձնուէր նահատակ հերոսներ։ Հայի տիպար ընտանիք մը, յատկ յիշատակելի գերդաստան մը»[19]։ Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել նրան, գտնելով, որ «Աւետիսեան իր ընդունակութեանց կը միացնէր Թէրլէմէզեան վաղեմի գերդաստանին անուան ու հարստութեան հմայքը և մեծ ազդեցութիւն ունէր արմէնական շարքերուն վրայ»[20]։ Կուսակցությունը թեկուզ իր ծրագրում և այլուր թեև պաշտոնապես կկոչվեր Արմենական կազմակերպություն, բայց «կազմակերպություն» բառը, նրա հիմնադիրների և անդամների համար հավասարազոր էր կուսակցություն հասկացությանը։ Արմենական կուսակցությունն օժտված էր քաղաքական կուսակցությանը հատուկ բոլոր բաղադրատարրերով։ Նրա ծրագիրը կամ կանոնագիրը, խստիվ գաղտնապահությունից ելնելով, կուսակցության մասնաճյուղերում երկար ժամանակ պահվում էր ձեռագիր վիճակում։ Այն առաջին անգամ հրապարակվում է «Երկրի ձայնում»[21]։

Խորհրդահայ պատմագիտության մեջ, ինչպես ասվեց, գերիշխող է եղել այն կարծիքը, ըստ որի Արմենական կուսակցության ծրագիրը համարվել է Ռ. Պատկանյանի «Վարդապետարան Հայաստանի ազատագրության» գրքույկը։ Այն լույս է տեսել Մարսելում, 1889 թ. և, բնականաբար, չէր կարող լինել 1885 թ. ստեղծված կուսակցության ծրագիրը։ Բացի այդ, արմենական գործիչներից ոչ մեկը չի նշում, թե «Վարդապետարանը» երբևիցե ծառայել է որպես ծրագրային փաստաթուղթ կուսակցության գործունեության համար[22], «Վարդապետարանը» չէր կարող հանդիսանալ ծրագրային փաստաթուղթ, քանի որ այն դոգմատիկ ու ստանդարտ ձևակերպումներով անընդունելի կլիներ գործող կուսակցության համար։ «Վարդապետարանը» եղել է «Հայոց հայրենասիրական Միության» օգտագործած քարոզչական փաստաթղթերից մեկը և իր ջերմ, հայրենաշունչ պաթոսով ոգեշնչել է Միության անդամներին։ Արմենական կուսակցության ծրագիրը ծնվել է տվյալ պահի և ժամանակի պահանջներից ու ամբողջովին բխել Արևմտյան Հայաստանում տիրող ընդհանուր իրավիճակից։ Արմենական կուսակ-

---

18 Նույն տեղում, էջ 19—20։

19 Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 427, ց. 1, գ. 37, էջ 1։

20 Հ. Ե ր ա մ ե ա ն, նշվ. աշխ., էջ 354—355։

21 Ա. Հ ա մ ր ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 158։

22 Վ ա չ է Ղ ա զ ա ր ե ա ն, նշվ. աշխ., էջ 19։

ցության ծրագիրը, որն ընդունվել է 1894 թ., կոնկրետ ժամանակի ծնունդ էր։ Կուսակցության ծրագիրը մշակողները հետևողականորեն հաշվի էին առել Արևմտահայաստանում գոյություն ունեցող ռեալ իրավիճակը և որպես առաջնահերթ նպատակ մատնանշել էին այդ դժոխային կացությունը վերափոխելու ուղին։

Այդ ուղին հեղափոխությո՛ւնն էր։ Կուսակցության ծրագիրը հռչակում էր. «Արմենական Կազմակերպութեանս նպատակը յեղափոխութեամբ Թիւրքիայի հայ ժողովրդեան համար իրաւունք ձեռք բերել ինքզինք ազատորէն կառավարելու»[23]։ Ծրագրում նշվում էր, որ կուսակցությունն իր ներքին ուժը գոյացնելու է ժողովրդի բոլոր խավերից, առանց նվազագույն իսկ դասակարգային իմաստով խտրականություն դնելու։ Կուսակցության գործելակերպը մերժում էր ցույցերի անցկացման պրակտիկան, միաժամանակ գտնելով անհրաժեշտ՝ կուսակցական մասնաճյուղերի գործունեությունը կապել երկրից դուրս գտնվող արտասահմանյան կենտրոնների հետ։ Կուսակցությունը գտնում էր, որ չպետք է իր ուժերը ցրի, այլ ազգերի մեջ հեղափոխական շարժումներ առաջ բերի, քանզի, ինչպես ասվում է ծրագրում, հայ ազգի ու մյուս ցեղերի միջև զգացման, աշխարհայեցողության, պահանջների ու զարգացման մեծ տարբերություններ կան, որով հայ ազգի հեղափոխական շարժումը կարող էր դանդաղել ու կնճռոտվել[24]։ Իսկ ինչպե՞ս և ինչպիսի միջոցներով էր Արմենական կուսակցությունը արևմտահայ ժողովրդին նախապատրաստելու ազատագրական հեղափոխության։ Այդ մասին կուսակցության ծրագրում ասվում է հետևյալը. «Արմենական կազմակերպութիւնս իր նպատակին հասնելու համար կաշխատի ներքին ոյժ գոյացնել, միացնելով իրարու հետ միեւնոյն գաղափարի ծառայող հայ հայրենասէրներ եւ կեդրոնական ուղղութեան ենթարկելով ժողովուրդը արթնցնել, կազմակերպութեան մղել եւ նպաստել տալ առանց բռնի միջոցների, յեղափոխական գրականութեամբ, ընտիր դաստիարակութեամբ, գործչի ազնիւ կենցաղով եւ քարոզով գաղափար տարածել, կանոնաւոր եւ յարատեւ յարաբերութիւն մշակել, գինակրթութեան եւ կարգապահութեան վարժեցնել, ինքնապաշտպանութեան զգացում արծարծել, զէնք եւ դրամ հայթայթել, զինուորական շարժուն խմբեր կազմակերպել եւ ի հարկին գործածել եւ ընդհանուր շարժման պատրաստել, երբ մանաւանդ արտաքին հանգամանքներն ալ (օտար պետութիւնների եւ շրջակա ցեղերի տրամադրութիւնները) մեզ նպաստաւոր համարուին»[25]։

Արմենական կուսակցության ծրագիրը կառուցված էր իրական հողի վրա, նկատի ունենալով այն դժնդակ պայմանները, որում հայտնվել էր արևմտահայությունը։

Կուսակցության ծրագիրը սոցիալական հեղափոխության և հնարավոր վարչաձևի հարցը թողնում էր ապագային, առաջնահերթը հռչակելով ամբողջ արևմտահայության ազատագրումը թուրքական լծից։

Արմենականների ծրագիրը չէր դնում ընկերվարական՝ միջազգայնական նպատակներ, քանի որ ճիշտ գնահատելով գավառում տառապող հայ ժողովրդի նյութական ծանր պայմանները և «դարերու կեղեքումով խեղճացած հոգեբանութիւնը, ընկերային յետամնաց վիճակը՝ չէին փորձէր որեւէ միջազգային վարդապետութեան եւ ընկերվարական դաւանանքի փորձարկութիւն կատարել կանխահասօրէն, հայ գիւղացիի գլխուն վրայ, որմէ ան ոչինչ կը հասկնար»[26]։

---

23 Ա ր մ. Ե կ ա ր ե ա ն, նշվ. աշխ., էջ 81։

24 Նույն տեղում, էջ 81—82։

25 Նույն տեղում, էջ 82։

26 Հ. Ո ւ զ ո ն ե ա ն, Արեւմտահայ Ազատագրական պայքարն Արմենական կուսակցութեան մէջ եւ Ռամկավար Ազատական կուսակցութիւնը իր 60-ամեակին, Լոս Անճելէս, 1986, էջ 23։

Այս տեսակետից տարօրինակ ու անարդարացի է հնչում երբեմն հանդիպող այն պնդումը, թե «...այդ ծրագիրը (արմենականների—Ա. Կ.) դեռևս հեղհեղուկ էր, իսկ նրա կազմողները հստակ պատկերացում չունեին ապագա Հայաստանի սոցիալ-քաղաքական հարաբերությունների ու նրա ազատագրման ուղիների մասին»[27]։ Այս կարգի դատողությունները բնավ չեն համապատասխանում իրականությանը։ Արմենականներն ընտրել էին շատ զգույշ տակտիկա, աշխատելով հայ ժողովրդի լայն խավերի մեջ արթնացնել ինքնապաշտպանության գիտակցությունը և «դնել զայն ամէն տեղ ինքզինքը պաշտպանելու վիճակին մէջ»[28]։

Արմենականների ծրագիրը նախատեսում էր կրթական-քարոզչական շարժման ծավալումը, նպատակ ունենալով էականորեն բարձրացնել ժողովրդի գիտակցական մակարդակը, բայց դրան զուգահեռ անհրաժեշտ էր համարվում զենքի ձեռք բերումը և զինավարժությունը, ժողովրդի նախապատրաստումը զինված ինքնապաշտպանության։ Եվ մխանգամայն ճշմարիտ ու դիպուկ է ասված, որ Արմենական կուսակցությունը «...կը տատանէր երկու տեսակէտներու միջև՝ ժողովուրդի իրաւունքները ձեռք բերել անոր մշակութային մակարդակի բարձրացումով, թէ ուժի միջոցով։ Արմենականութիւնը այսպէսով իր մէջ կամփոփէր միաժամանակ եւ յեղափոխականը, եւ կուլտուրական գործիչը։

Ան կը հաւատար, թէ աստիճանական խաղաղ զարգացումին եւ թէ յեղափոխական գործելակերպին՝ զէնքին»[29]։

Իսկ կազմակերպչական ի՞նչ հիմունքներով էր գործում Արմենական կուսակցությունը, ինչպիսի կառույցներից էր բաղկացած այն։ Կուսակցությունը բաղկացած էր գործող ու քաջալերող անդամներից, ընդ որում «Գործող անդամներ անոնք են՝ որք կազմակերպութեանս կանոններին կենթարկուին, նորա հրահանգները կը գործադրեն եւ պարբերական տուրք մը կը վճարեն։ Քաջալերողները անոնք են, որոնք կազմակերպութեանս ծրագրին կը համակրին եւ նիւթապէս ու բարոյապէս կօժանդակեն կազմակերպութեանս, առանց ենթարկուելու նորա կանոններին եւ հրահանգներին»[30]։

Կուսակցության կազմակերպական հիմնական միավորը խումբն էր։ Գործող յուրաքանչյուր 10—15 անդամներ գոյացնում էին խումբը, որը պարտավոր էր պարբերաբար (15 օրը մեկ անգամ) ժողով գումարել։ Խումբն ուներ խմբապետ, գանձապահ ու մթերապահ։ Նրանք իրավասու էին գործելու միայն խմբի հավաքական կամքով և ընդհանուր որոշումով։ Իսկ խումբը կազմալուծվելու դեպքում եղած գույքն ու դրամը մնում էին մասնաժողովի տրամադրության ներքո։ Խմբապետն ընտրվում էր երկու տարվա տևողությամբ, գաղտնի քվեարկությամբ։ Նույն ձևով ընտրվում էին գանձապահն ու մթերապահը։ Երկու տարին լրանալուց հետո այս պատասխանատու պոստերում ընտրվածներին զեղծումների կամ այլ հանգամանքների դեպքում կարող էին քվեների մեծամասնությամբ հեռացնել ընտրված պաշտոններից[31]։ Խումբը սովորաբար չէր ունենում քարտուղար կամ ատենադպիր։ Այն իր լիազորություններով մեծապես կախված էր մասնաժողովից և ղեկավարվում էր նրա հրահանգներով։ Խմբերի միջև համերաշխ գոյակցություն հաստատելու նպատակով «5—12 խումբեր կրնային միանալ իրարու եւ կազմել համայնք մը։ Համայնքին գործերու ղեկավարումը կը վստահուէր միացող խումբերու խմբապետներէն բաղկացած խմբապետական ժողովին, որ առնուազն երեք շաբաթը անգամ մը կը գու-

---

27 Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 2, Երևան, 1976, էջ 94։

28 Արմ. Եկարեան, նշվ. աշխ., էջ 82։

29 Ռուրէն, Հայ հեղափոխականի մը յիշատակները, հ. Բ., Բեյրութ, 1983, էջ 93։

30 Արմ. Եկարեան, նշվ. աշխ., էջ 82։

31 Վաչէ Ղազարեան, նշվ. աշխ., էջ 29։

մարէր հերթական նիստ»[32]։ Իսկ խմբապետական ժողովները իրենց կողմից երկու տարվա համար մեկական ներկայացուցիչ ընտրելով կազմում էին մասնաժողովը, որն ուներ իր նիստերը վարող և որոշումների գործադրությանը հսկող ատենապետ, թղթակցությունները և հրահանգները խմբագրող քարտուղար, գանձապահ, մթերապահ, ինչպես նաև խմբերի գույքի վիճակագրական ցուցակները պահող ու ստուգող ընդհանուր քննիչ և հրատարակությունների ու հանձնարարությունների բաշխմանը հետևող տեսուչ։

Մասնաժողովն իր նիստերը դումարում էր երեք շաբաթը մեկ։ Այդ նիստերին կարող էին մասնակցել կուսակցության ծրագիրն ընդունող համակիր անդամներ ևս, պայմանով, որ նրանց թիվը չկազմի մասնաժողովի անդամների կեսից ավելին։ Մասնաժողովները վարում էին տեղական և ամեն կարգի գործերը, բայց առանց Կենտրոնի թույլտվության չէին կարող հարաբերությունների մեջ մտնել հեղափոխական այլ կազմակերպությունների հետ։ Մասնաժողովը վարում էր մեկ կամ ավելի համայնքներից կազմված շրջանակների գործերը և կապ էր պահպանում Կենտրոնի ու այլ մասնաժողովների հետ։ Կուսակցության Կենտրոնը կազմվում էր յուրաքանչյուր շրջանակի մասնաժողովի ներկայացուցիչներից։ Այն կուսակցության գերագույն մարմինն էր, որը վարում էր հեղափոխական գործի վերին տեսչությունը՝ կանոնավոր հարաբերություններ ունենալով մասնաժողովների, ինչպես նաև կապ պաշտպանելով հեղափոխական այլ մարմինների հետ։ Շրջանակների թիվը որոշվում էր Կենտրոնի կողմից։ Մինչ այժմ հավաստի տեղեկություններ կան Արմենական կուսակցության հինգ շրջանակների գոյության մասին[33]։ Կազմակերպական տեսակետից ամբողջ Վասպուրականը, որը կուսակցության Ա շրջանակն էր, բաղկացած էր չորս համայնքից՝ Յայնկոյս Զոր, Նորաշեն, Արարք և Քաչաքամնջ[34]։ Յուրաքանչյուր շրջանակ ուներ իր հատուկ կանոնադրությունը, որով տեղի պահանջներին համեմատ որոշվում էր նրա զանազան հատվածների պարտականության և իրավունքների սահմանը, ինչպես նաև մասնաժողովների ընտրության եղանակը։ Ներքին կանոնագիրը չպիտի հակասեր կուսակցության ծրագրի որևէ կետին։ Կուսակցության մեջ կազմակերպական այս գործադիր մարմիններին զուգահեռ գործում էր զինվորական ատյանը կամ մարմինը, որի խորհրդակցություններին մասնակցում էին Կենտրոնի երկու ներկայացուցիչներ։ Զինվորական ատյանը իր տրամադրության ներքո ուներ հատուկ ընտրված մի քանի տասնյակ մարտիկներից բաղկացած խմբեր, որոնք միշտ պատրաստ էին գործադրելու ստացված հրահանգները։ Կենտրոնը պետք է ունենար իր հատուկ պաշտոնաթերթը, որը կտարածեր կուսակցության դավանած գաղափարները և պաշտոնական հայտարարություններն ու որոշումները։ Ծրագրում նշված էր, որ «Արմենական կազմակերպությունս հիմնուած ըլլալով «Արմենիա»-ի ցարդ քարոզած սկզբունքներուն վրայ, կաշխատի այդ թերթի գաղափարի տարածման»[35]։ Սակայն ծրագրի այդ կետը պետք է ընդունել մի շարք վերապահություններով։ «Արմենիան» ոչ մի փուլում չի եղել արմենականների կուսակցության կենտրոնական պաշտոնաթերթը։ Ինչպես նշում է Վ. Ղազարյանը, թերթը միայն որոշ, սկզբնական շրջանի համար կարող էր լինել կուսակցության խոսափողը, իսկ արմենական Ս. Զթչյանն անդրադառնալով 1895-ի օրերին, երբ արմենականները բավական զորեղ էին, նշում է, որ առաջարկություններ կային նոր ծրագրի և նոր պաշտոնաթերթի մասին[36]։ Արմենական նշանա-

---

32 Նույն տեղում, էջ 30—31։

33 Նույն տեղում, էջ 32։

34 Ա ր մ. Ե կ ա ր ե ա ն, նշվ. աշխ., էջ 72—73։

35 Նույն տեղում, էջ 81։

36 Վ ա չ է Ղ ա զ ա ր ե ա ն, նշվ. աշխ., էջ 15։

վոր գործիչ Արտակ Դարբինյանն իր հուշագրության մեջ հիշատակում է կուսակցական պարագլուխ Ս. Ավետիսյանի այն խոսքերը, թե «Փորթուգալական գալեան այժմ հեռու է երկրէն, օտար անկիւն մը ապաստանած՝ զբաղած է իր «Արմէնիա» թերթին հրատարակութեամբ։ Կարելի է օգտուիլ այդ թերթին մէջ երեւցած այս կամ այն թեյադրութիւններէն, բայց մենք արդէն մ'էջ երեւցած այս կամ այն թեյադրութիւններէն, բայց մենք արդէն մ'տել ենք գործնական աշխատանքներու շրջանին մէջ։ Մեր լաւագոյն թեյադրութիւնները այժմ Երկրին մէջ գործող ուժերէն եւ անոնց գործունէութեան տուած արդիւնքներէն կուգան»[37]։

Առհասարակ և արմենական, և այլ հուշագրողներ բազմիցս նշել են, որ Մ. Փորթուգալյանը արմենական կուսակցության հետ «բարոյականէն զատ ուրիշ կապակցութիւն» չունի[38]։

Արմենական կուսակցության ծրագիրը հետագայում ենթարկվել է լոկ մասնակի փոփոխությունների, ըստ էության պահպանելով իր հիմնական բովանդակությունը։ Բայց այն թյուրիմացարար է ըմբռնվել ժամանակի և հետագա որոշ գործիչների ու հետազոտողների կողմից։ Ոմանք, անդրադառնալով կուսակցության ծրագրին, այն մեկնաբանել են որպես ոչ իրատեսական, իսկ մյուսները գրել են, թե արմենականությունը պարզապես մարդկանց խայտաբղետ խմբակցություն էր[39]։ Ուրիշները հասել են այնտեղ, որ «դատավճիռ» են արձակել, թե «Կուսակցութեան մը որակումն իսկ դժուար է տալ արմենականութեան, որ ընդհանուր շփոթ մտայնութեան մը արտաքսումն է կազմակերպութեան մը ձեւին տակ»[40]։ Պարզապես զարմանալ կարելի է, թե որտեղի՞ց է գալիս այս եզրահանգումը։

Եղել են պատմաբաններ, որոնք անտեղյակությամբ արմենականների ծրագիրը համարելով «Վարդապետարան Հայաստանի՝ ազատագրության» գրքույկը, հեշտությամբ քննադատել են, թե «Դա տակավին՝ հեղհեղուկ ծրագիր էր, որի վրա նկատելի էր բուրժուական և անգամ կղերական հայացքների ազդեցությունը»[41]։ Այսօր, խորթ են հնչում խորհրդահայ պատմագիտության մեջ ժամանակին տեղ գտած այն պատկերացումները, ըստ որոնց «...արմենական կուսակցությունը արևմտահայ բուրժուազիայի իղձերի արտահայտիչն էր, նրա անդամները մեծ մասամբ պատկանում էին տեղի սեփականատեր դասին, որը չէր ցանկանում ռիսկի ենթարկել իրեն, իր ունեցվածքը թուրքական ջարդարար կառավարության... դեմ չնախապատրաստված, ժամանակավրեպ ելույթներով»[42]։

Հետագայում՝ ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության տարիներին, արմենական նշանավոր գործիչ Ե. Քյոսյանը (Սեպուհ) կուսակցության կենտրոնի անունից գրեց մի թռուցիկ շրջաբերական, որը կցվեց ծրագրին որպես հավելված։ Նրանում ասվում է, որ Հայկական հարցը, ինչպես բոլոր ճնշված, բայց իրենց ինքնուրույնությանը նախանձախնդիր ազգերի հարցերը, նոր չէ, այլ պատմականորեն է առաջացել։ Թուրք կառավարության ամբաստանությունը, թե հայ ժողովուրդը Բերլինի դաշնագրից հետո որևէ տեղ ապստամբել է, ոչ այլ ինչ է, եթե ոչ ծայրահեղ նենգամիտ սադրանք։ Այնուհետև նշվում է, եթե «տարբերական մարդկային իրաւունքներ զլացում է կուլտուրապէս մի ժողովրդի. նա ամէն իրաւունք ունի ապստամբելու։ Սակայն իրաւունքը միայն հերիք չէ, սորա համար առաջ եւ առաջ ոյժը եւ արտաքին պաշտպանութիւնը կարեւոր

37 Արտակ Դարբինեան, նշվ. աշխ., էջ 43—44։

38 Համբարձում Երամեան, նշվ. աշխ., էջ 355։

39 Ղ. Ղարաջյան, Հեղափոխականի հիշատակարանը (Նախկին մարքսիզմ-լենինիզմի ինստիտ. հայկ. մասնաճյուղի արխիվ, ֆ. 51, գ. 90, թ. 37)։

40 Լեւոն Զորսմիսեան, Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Բ, Պէյրութ, 1974, էջ 194։

41 Վ. Ա. Պարսամյան, Պատմագիտական աշխատություններ, Երևան, 1985, էջ 211։

42 Վ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 82։

են, որոնք դժբախտաբար չէ ունեցեր եւ չունի հայ ժողովուրդը»[43]։ Հավելվածում շեշտվում է, որ հայ ժողովուրդը պարտավորված է իր բոլոր միջոցներով փարել ինքնապաշտպանության գաղափարին, իր մարդկային իրավանց դատին՝ ձեռք բերելու համար տանելի մի վիճակ։ Իսկ ինքնապաշտպանության գաղափարը իրացնելու համար անհրաժեշտ է ոչ միայն հայի ձեռքը զենք դնել, այլև կրթել նրա ստրկացած բնավորությունը, զարգացնել նրա մեջ մարդկային արժանապատվության զգացումը։ Հավելվածում հռչակվում էր, որ «Էնկերային, սոցիալիստական յեղափոխությունը մեր իրականության հետ կապ ունեցող հեռաւոր գաղափարն է, որին պէտք է ձգտինք ապագային, երբ որ քաղաքական կարգերի եւ տնտեսական պայմանների շնորհիւ առաջ կուգայ մեր մէջ նոր հասարակութիւն»[44]։ Այս դրույթը նորություն էր արմենականների 1894 թ. ծրագրի հետ համեմատած, և, անշուշտ, կապված էր Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական իրադարձությունների հետ, որը շարժել էր արևմտահայության բուռն հետաքրքրությունը[45]։

Այսպիսով, արմենականների ծրագիրը բխում էր բուն կյանքի պահանջներից, և իրավացի էր Ա. Դարբինյանը, երբ ընդգծում էր. «Չէը գտներ այդտեղ տող մը, նախադասութիւն մը, որ փոխ առնուած ըլլայ տարբեր մթնոլորտներու, տարբեր ժողովուրդներու յեղափոխական կազմակերպութիւններու «աշխարհայացքներէն» կամ լոզունգներէն»[46]։ Արմենական կուսակցությունը առաջին և միակ հայ քաղաքական կուսակցությունն էր, որը հիմնվեց ու բնավորվեց Արևմտյան Հայաստանում, նրա կենտրոնում, հետագայում, իհարկե, մասնաճյուղեր ունենալով գաղութահայության շրջանում։ Արմենականներն իրենց կազմակերպությունները ունեցան Պարսկաստանում (Սալմաստ-Թավրիզ), Մուշում, բայց կուսակցությունն իր հեղափոխական ու քարոզչական արմատական գործունեությունը ծավալեց հիմնականում Վան-Վասպուրականում։

Արմենական կուսակցության մեջ կային ամենատարբեր զբաղմունքի և կրթության մարդիկ՝ արհեստավորներ, հողագործներ, բժիշկներ, առևտրականներ, ուսուցիչներ, գործիչ-քարոզիչներ, հոգևորականներ, ուղեցույցներ, իրավաբաններ, զինագործներ, հայդուկներ։ Նրանք խիստ գաղտնի, առանց որևէ աղմուկի ու ցուցամոլության համառ ու հետևողական աշխատանք էին տանում ժողովրդի ամենալայն խավերի շրջանում՝ զինական ու զինավարժական գործը կազմակերպելու համար։ Արմենական կուսակցության, նրա խմբերի ու ծաանդակ մասնաճյուղերի անդամների մեծագույն մասը Արևմտահայաստանից էին, արևմտահայեր և մասնավորապես Վան-վասպուրականցիներ։

Այսպիսով, արմենական կուսակցությունը գոյացած ու հիմնված էր կազմակերպական ամրակուռ հիմքերի վրա, մեծապես հաշվի առնելով Արևմտյան Հայաստանում պատմականորեն առաջացած գոյավիճակը և ներքին պայմանները։ Արմենականներն իրավացիորեն ամենայն խստությամբ ու հետևողականությամբ նկատի էին ունեցել այն դժնդակ կացությունը, որի մեջ հայտնվել էր արևմտահայությունը և կազմակերպական առումով ռուսակցական կառույցը ստեղծել էին այնպես, որ իրենց հեղափոխական գործունեությունը ծավալելիս նվազագույն իսկ չափով վտանգի տակ չդնեին արևմտահայ գյուղացիության անվտանգությունը՝ ռութանական ու քրդական բաշիբոզուկներին առիթ չտալով զանազան պատրվակ-

---

43 Ա. Դարբինեան, նշվ. աշխ., էջ 170—171։
44 Նույն տեղում, էջ 171։
45 Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 166։
46 Նույն տեղում, էջ 125։

ներով թափելու արեմտահայերի արյունը։ Արմենական կուսակցության կազմակերպական սկզբունքները ժամանակի հայ իրականության մեջ բացառիկ ուշագրավ երևույթ են։

ФОРМИРОВАНИЕ ПАРТИИ АРМЕНАКАНОВ

А. О. КАРАПЕТЯН

Резюме

Арменаканы появились в Ване в 1885 г. Некоторые историки связывают создание партии непосредственно с именем Мкртича Португаляна. Однако многочисленные фактические материалы доказывают, что известный патриот Мкртич Португаляи являлся идейным вдохновителем, а не основателем партии. Партия арменаканов была создана его учениками и последователями во главе с М. Аветисяном.